

Գ ի Ր  
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՐ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ  
ԱՌ ՏԻԱՐ ՊԵՏՐՈՍ ԼՈՒՍԱՐԱՐԵԱՆ

Ուրախութեամբ կը տեղեկանամք որ դուք եւ ձեր ազնիւ Տիկինը՝ Պերճուհի, փլորիտայի երեք նորակազմ համայնքներուն՝ Օրլանտո, Օգալա եւ Սէյնթ Փեթերզ-պուրկ սկիհներ, բուրվառներ, շրամաններ եւ խորանի ծածկոցներ նուիրած էք:

Մեծապէս կը գնահատենք ձեր այս մտածումը եւ կատարած օժանդակութիւնը այն համայնքներուն, որոնք իրենց կազմութեան սկզբնական շրջանին մեծ կարիքը ունէին նման կրօնական իրերու, գործածելի Ս. Պատարագի մատուցման ընթացքին:

Նկատի ունենալով առանձնապէս ձեր եկեղեցատէր ծառայութիւնը, կրօնական պաշտամունքներու ծանօթութիւնն ու եկեղեցական արարողութեանց ձեր բերած օգտակար մասնակցութիւնը, այսու գիրով կը տեղեկացնենք որ առաջին առիթով ուրար կրելու իշխանութիւն պիտի շնորհենք ձեզի:

Կ'օրհնենք ձեզ ու ձեր հարազատները, եւ կ'աղօթենք որ Տէրը իր շնորհներով զարդարէ ձեր բոլորին կեանքի օրերը:

Սիրոյ ողջունիւ

ՔՐԻՍՏՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՍԿՈՍ

Առաջնորդ

Դեկտեմբեր 20, 1985

Նիւ Եորք, Ն.Ե.